ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2
ԵՊՀ ԻՄ տնտեսագիտության ֆակուլտետի խորհրդի նիստի

Ք. Իջևան

23.11..2013թ.

Նախագահ Ն. Խուդավերդյան /դեկան/

Քարտուղար Գ. Առուշանյան /քարտուղար/

Խորհրդի նիստին մասնակցում էին նախագահ Ն. Խուդավերդյանը, քարտուղար Գ. Առուշանյանը, Ա. Պոտոսյանը, Հ. Մարզպանյանը, Պ Ասիլբեկյանը, Գ. Ավետիսյանը, ուս. խորհրդի նախագահ Լ. Ալեքսանյան , ՈՒԳԸ նախագահ Հ. Ալիխանյանը:

ՕՐ Ա Կ Ա Ր Գ

1.Լսել ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների գործունեության վերաբերյալ ամբիոնի վարիչների հաշվետվությունները:

/Զեկ. Հ. Մարզպանյան/

/Զեկ. Ա. Պոտոսյան/

2.Լսել ֆակուլտետի ուս. խորհրդի և ՈՒԳԸ նախագահների հաշվետվությունները համապատասխան կառույցների գործունեության վերաբերյալ:

/Զեկ. Լ. Ալեքսանյան/

/Հ. Ալիխանյան /

3.Ընթացիկ հարցեր

1. Լսեցին - «Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի վարիչ Հ. Մարզպանյանին

Հ. Մարզպանյանը զեկուցեց, որ 2013 – 2014 ուս. տարվա առաջին կիսամյակում «Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի աշխատանքները կազմակերպվել են համաձայն հաստատված ամբիոնի աշխատանքային պլանի՝ կիսամյակի կտրվածքով: Ամբիոնի բոլոր դասախոսները աշխատել են հաստատված անհատական ծանրաբեռնվածությունների շրջանակում և հիմնականում կատարել են այն պահանջներն որոնք նախատեսված են եղել ուսումնական գործընթացի տարբեր օղակների համար սահմանված ծրագրերով. ուսումնական պլանի համաձայն անհրաժեշտ ծավալի դասաժամերով կարդացվել են

դասախոսություններ, անց են կացվել սեմինար և գործնական պարապմունքներ, ինչպես նաև համապատասխան ընթացիկ քննություններ և ստուգումներ:

Ամբիոնը բավարար չափով իրականացնում է նաև ուսանողների կուրսային և ավարտական աշխատանքների ղեկավարման գործունեությունը, կազմակերպում է լրացուցիչ պարապմունքներ և խորհրդատվություն:

Ամբիոնի որոշ դասախոսներ ակտիվորեն ներգրավված են / Հ. Մարզպանյան, Գ. Սիրոյան, Ա. Սարիբեկյան, Գ. Գալստյան/ գիտահետազոտական գործունեության մեջ, սակայն նույնը չի կարելի ասել բոլորի մասին, և այս ուղղությամբ որոշ դասախոսների համար առաջիկայում կան զգալի ծավալի անելիքներ. անհրաժեշտ է ավելացնել ամբիոնի դասախոսների կողմից հրատարակվող հոդվածների թիվը, քանի որ այն դեռևս անբավարար է և ակտիվացնել դասախոսների մասնակցությունը հանրապետական և միջազգային գիտաժողովներին:

Ուսանողների գիտահետազոտական գործունեությունը առայժմ հիմնականում իրականացվում է կուրսային և ավարտական աշխատանքների շրջանակներում: Ուսանողները չեն ընդգրկված ամբիոնի գծով իրականացվող թեմատիկ գիտահետազոտական ծրագրերում, գրեթե չեն հրատարակվում գիտական աշխատանքներ դասախոսների և ուսանողների համահեղինակությամբ:

Լսեցին - «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի վարիչ Ա. Պոտոսյանին

Նա նշեց, որ 2013-14 ուս. տարում « Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի կողմից իրականացվել են ամբիոնի աշխատանքային պլանում ներառված ծրագրերը, որոնք բխում են ֆակուլտետի ռազմավարական ծրագրից, դասախոսների անհատական զարգացման պլաններց և ամբիոնի գիտակրթական գործունեության բոլոր հիմնական ուղղություններից, ընթացակարգերից ու գործընթացներից:

Մասնաճյուղի գործունեության կազմակերպման ժամանակացույցով նախատեսված կարգով ժամկետներում ամբիոնի կողմից կազմվել և ուսանողներին է տրամադրվել նախատեսված ավարտական և կուրսային աշխատանքների թեմաները, առարկայական և պետական քննական հարցաշարերը:

Առարկայական ծրագրերը դասախոսների կողմից վերանայվել են, արդիականացվել, թարմացվել են գրականության ցանկերը և ամբիոն են ներկայացվել ժամանակին ,

քննարկվելուց հետո հաստատվել են ամբիոնի կողմից: Դասախոսների մուտքերը և ծրագրերի կատարողականը պարբերաբար վերահսկվել են:

Ամբիոնի վարիչի և ավարտական աշխատանքների ղեկավարների կողմից քննարկվել է ավարտական աշխատանքների կատարման ընթացքը և տրվել են կոնկրետ հանձնարարականներ ղեկավարներին և ուսանողներին՝ աշխատանքները ժամանակին և որակով կատարելու համար:

Ընթացիկ քննությունները և ստուգումները անց են կացվել ըստ ժամանակացույցի:

Ամբիոնի վարիչը նշեց, որ ըստ դասալսումների ժամանակացույցի անց է կացվել դասալսումներ, փոխադարձ դասալսումներ, որոնց արդյունքները քննարկվել են ամբիոնում:

Ուշադրություն է դարձվել նաև դասախոսների գիտական գործունեությանը:Ամբիոնի դասախոս Լիաննա Բեգինյանը նոյեմբեր ամսին հանձնել է մասնագիտական /«Ազգագրություն»/ առարկայից թեկնածուական մինիմում: Ամբիոնի դասախոսները պարբերաբար գիտական հոդվածներ են տպագրում գիտական հանդեսներում:

Արտահայտվեցին - Գ. Ավետիսյանը, Պ. Ասիլբեկյանը

Արտահայտվողները նշեցին, որ ֆակուլտետի երկու մասնագիտական ամբիոններում կատարված աշխատանքները կարելի է գնահատել բավարար:

Որոշեցին - ամբիոնի վարիչների կիսամյակային հաշվետվությունը ամբիոնում կատարված աշխատանքների վերաբերյալ ընդունել ի գիտություն, իսկ ամբիոնի գործունեությունը գնահատել բավարար:

2.Լսեցին - ուսանողական խորհրդի նախագահ Լ. Ալեքսանյանին

Նա նշեց, որ ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողական խորհուրդը իր հասարակական գործունեությունը ֆակուլտետում իրականացնում է՝ հիմք ընդունելով ԵՊՀ ԻՄ ՈՒսանողական խորհրդի կանոնադրությունը: Մասնավորապես ֆակուլտետի ՈՒԽ –ի գործունեության նպատակներն են հանդիսանում.

- պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները,
- իրազեկել ուսանողներին իրենց իրավունքների ու պարտականությունների մասին,

- աջակցել ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, կազմակերպել ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը,
- մասնակցել ֆակուլտետում ներքին կարգապահության պահպանմանը:

2013 – 2014 ուսումնական տարվա ընթացքում ուսանողական խորհուրդը սերտ համագործակցել է ֆակուլտետի դեկանի, ֆակուլտետում առկա երկու մասնագիտական ամբիոնների, ինչպես նաև դեկանատի հետ: Ուսումնական տարվա ընթացքում ՈՒԽ –ն ակտիվորեն մասնակցել է ֆակուլտետային ներքին կարգապահության պահպանմանը, հետևել ուսանողների հաճախումներին, քննարկվել և լուծում է տրվել կրթաթոշակների հարցով դիմած ուսանողների բողոքներին, հետևողական է եղել քննական հարցաշարերի տրամադրման հարցում: Աշխատանքներ է տարել առաջին կուրսեցիներին բացատրելու թեստային համակարգով քննական ընթացակարգը, այնուհետև օգնել է կատարել ընթացիկ քննությունների ժամանակ առաջացած բողոքների և խնդիրների պարզաբանում:

Ուսումնական տարվա սկզբից ՈՒԽ –ի աշխատանքային նպատակն էր հանդիսանում ներգրավել առաջին կուրսի ուսանողներին ֆակուլտետային ուսանողական խորհրդի աշխատանքներին: Կազմվել է ֆակուլտետի ՈՒԽ –ի նոր խումբ՝ ընդգրկելով ֆակուլտետի շնորհալի ուսանողներին:

Ուսանողի օրվա կապկցությամբ կազմակերպվել է կինոդիտում, որի ընթացքում ցուցադրվել է «Թագավորի խոսքը»՝ պատմական փաստերի հիմնան վրա նկարահանված գեղարվեստական կինոնկարը:

Անց է կացվել բանավեճ՝ «Արդյոք ճիշտ է երեխային համացանցից զրկել: Սոցիալական ցանցերը որպես ժամանակ վատնելու միփոց» թեմային շուրջ:

ՈՒԽ – ն հետևողական է ուսանողների առաջարկներին և պահանջներին:

Լսեցին - ՈՒԳԸ –ի նախագահ Հ. Ալիխանյանին

Նա նշեց, որ 2013-2014 ուս. տարվա առաջին կիսամյակի ընթացքում տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերությունն իրականացրել է կանոնադրային պահանջներից բխող գործառույթներ ու քայլեր, աջակցել է ուսանողությանը՝ գիտական և կրթական ոլորտներում, նպաստել է ուսանողների գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը և ուսանողական առօրյայի կազմակերպմանը:

Արտահայտվեցին - Հ. Մարգպանյանը, Ա. Պոտոսյանը

Արտահայտվողները նշեցին, որ ֆակուլտետի ուսանողական խորհրդի և ՈՒԳԸ –ի կատարած կիսամյակային աշխատանքները կարելի է գնահատել բավարար:

Որոշեցին - Ֆակուլտետի ուսանողական խորհրդի և ՈՒԳԸ –ի կատարած կիսամյակային աշխատանքները գնահատել բավարար:

3.Լսեցին - ընթացիկ հարցեր

Ֆակուլտետի 2013–14 ուս. տարվա ըստ գործող մասնագիտությունների առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների քննարկման և ամփոփման մասին

/Զեկ. Ն. Խուդավերդյան/

Ն. Խուդավերդյանը նշեց, որ ըստ մասնագիտությունների 2013-14 ուս. տարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննություններն ու ստուգումներն անց են կացվել նախապես դեկանատի կողմից կազմված և տնօրենության կողմից հաստատված ժամանակացույցի համաձայն: Նա նշեց, որ դեկանատը ամենայն մանրամասնությամբ վերլուծել է 2013-14 ուս. տարվա վերը նշված գործընթացի արդյունքները: Ներկայացրեց, որ ֆակուլտետում առաջին ընթացիկները կազմակերպվել է թվով 148 ուսանողների համար: Այդ թվում՝ անվճար համակարգում սովորող 26 ուսանողների և վճարովի համակարգում սովորող 122 ուսանողների համար: Նա ներկայացրեց վերլուծության արդյունքներն ըստ ֆակուլտետում գործող մասնագիտությունների և ըստ կուրսերի:

Տնտեսագիտության ֆակուլտետում ***<u>ընթացիկ քննություններ</u>*** անց են կացվել երկու մասնագիտությունների վեց կուրսերում: Ստորև բերենք համապատասխան տվյալները.

<u>«Տնտեսագիտության տեսություն»</u>

I կուրս - 33 ուսանող

1. Մաթ. անալիզ-1 - ներկայացել է ընթացիկ քննության 33 ուսանող, 10 ուսանող գրանցել է «0», առաջադիմությունը կազմել է 70 %,
2. Տնտես. տեսություն-1 - ներկայացել է ընթացիկ քննության 33 ուսանող, 10 ուսանող գրանցել է «0», առաջադիմությունը կազմել է 70 %:

Երկու առարկաներից էլ գրանցել է «0» - 2 ուսանող:

Մովսիսյան Ռայա

Ներսեսյան Տիգրան

II կուրս - 30 ուսանող

1. Գործույթների հետազ. մաթ. մեթոդներ - ներկայացել է ընթացիկ քննության 30 ուսանող, 13 ուսանող գրանցել է «0», առաջադիմությունը կազմել է 57 %,
2. Հավան. և կիրառական վիճակագր. - ներկայացել է ընթացիկ քննության 30 ուսանող, առաջադիմությունը կազմել է 100 %,
3. Տնտեսական պատմություն - ներկայացել է ընթացիկ քննության 30 ուսանող, 2 ուսանող գրանցել է «0», առաջադիմությունը կազմել է 93 %,

Երեք առարկաներից «0» գրանցած ուսանողներ կուրսում չկան:

IV կուրս - 32 ուսանող

1. Ֆինանսներ-2 - ներկայացել է ընթացիկ քննության 31 ուսանող, 5 ուսանող գրանցել է «0», առաջադիմությունը կազմել է 81 %,
2. Բանկային գործ - ներկայացել է ընթացիկ քննության 32 ուսանող, 2 ուսանող գրանցել է «0», առաջադիմությունը կազմել է 94 %,
3. Մենեջմենթ - ներկայացել է ընթացիկ քննության 30 ուսանող, առաջադիմությունը կազմել է 94 %,
4. Մարդկ. ռես. և աշխ. էկոն. - ներկայացել է ընթացիկ քննության 32 ուսանող, առաջադիմությունը կազմել է 100 %,

Չորս առարկաներից «0» գրանցած ուսանողներ կուրսում չկան:

<u>«Սերվիս»</u>

I կուրս - 17 ուսանող

1. Տնտ. և սոց. աշխ. - ներկայացել է ընթացիկ քննության 17 ուսանող, 2 ուսանող գրանցել է «0», առաջադիմությունը կազմել է 88 %,
2. ՍՄԾ և զբ. ներած. - ներկայացել է ընթացիկ քննության 17 ուսանող, առաջադիմությունը կազմել է 100 %,
3. Ընդհան. երկրագիտ. - ներկայացել է ընթացիկ քննության 17 ուսանող, 2 ուսանող գրանցել է «0», առաջադիմությունը կազմել է 88 %:

II կուրս - 17 ուսանող

1. Տուրիզմի հիմունքներ - ներկայացել է ընթացիկ քննության 17 ուսանող, 2 ուսանող գրանցել է «0», առաջադիմությունը կազմել է 88 %,

2. Հայաստանի պատմական աշխարհ. - ներկայացել է ընթացիկ քննության 17 ուսանող, 2 ուսանող գրանցել է «0», առաջադիմությունը կազմել է 88 %,

IV կուրս - 19 ուսանող

1. Համաշխարհային քաղաքակրթ. պատմ. - ներկայացել է ընթացիկ քննության 18 ուսանող, առաջադիմությունը կազմել է 95 %,
2. Հյուր. և ռեստ. մարք. - ներկայացել է ընթացիկ քննության 18 ուսանող, 1 ուսանող գրանցել է «0», առաջադիմությունը կազմել է 89 %,
3. Երկր. օտար լեզու-3 - ներկայացել է ընթացիկ քննության 19 ուսանող, 2 ուսանող գրանցել է «0», առաջադիմությունը կազմել է 89 %,

Այնուհետև նա ներկայացրեց ֆակուլտետում անց կացված ընթացիկ ստուգումների արդյունքների վերլուծությունը: ***Ընթացիկ ստուգումներ*** անց են կացվել երկու մասնագիտությունների հինգ կուրսերում: Ստորև բերենք համապատասխան տվյալները.

«Տնտեսագիտության տեսություն»

II կուրս - 30 ուսանող

1. Ազգային տնտեսություն - ներկայացել է ընթացիկ ստուգման 30 ուսանող, 2 ուսանող գրանցել է «0», առաջադիմությունը կազմել է 93 %,

IV կուրս - 32 ուսանող

1. Մարքեթինգ - ներկայացել է ընթացիկ ստուգման 30 ուսանող, 6 ուսանող գրանցել է «0», առաջադիմությունը կազմել է 75 %,
2. Միջազգային մենեջմենթ - ներկայացել է ընթացիկ ստուգման 30 ուսանող, 4 ուսանող գրանցել է «0», առաջադիմությունը կազմել է 81 %,

Երկու առարկաներից էլ գրանցել է «0» - 6 ուսանող:

Գասպարյան Նարեկ
Գրիգորյան Սամվել
Գուլլակյան Սամվել
Մարկոսյան Նարեկ
Մարտիրոսյան Դավիթ
Պետրոսյան Գառնիկ

«Սերվիս»

I կուրս - 17 ուսանող

1. Հայ ազգագրություն - ներկայացել է ընթացիկ ստուգման 17 ուսանող, առաջադիմությունը կազմել է 100 %,

2. Օտար լեզու-1 - ներկայացել է ընթացիկ ստուգման 17 ուսանող, առաջադիմությունը կազմել է 100 %,

II կուրս - 17 ուսանող

1. Տնտեսագիտություն - ներկայացել է ընթացիկ ստուգման 16 ուսանող, 4 ուսանող գրանցել է «0», առաջադիմությունը կազմել է 71 %,
2. Հայ եկեղեցու պատմ. - ներկայացել է ընթացիկ ստուգման 17 ուսանող, 4 ուսանող գրանցել է «0», առաջադիմությունը կազմել է 76 %,
3. Օտար լեզու-3 - ներկայացել է ընթացիկ ստուգման 17 ուսանող, առաջադիմությունը կազմել է 100 %,

IV կուրս - 19 ուսանող

1. Ռեկրեացիոն աշխարհագրություն - ներկայացել է ընթացիկ ստուգման 18 ուսանող, առաջադիմությունը կազմել է 95 %,
2. Աշխարհագրական տեղեկատվ. համակարգ. սերվիսում - ներկայացել է ընթացիկ ստուգման 18 ուսանող, առաջադիմությունը կազմել է 95 %:

Արտահայտվեցին - «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության խորհրդատու Գ. Ավետիսյանը և «Սերվիս» մասնագիտության խորհրդատու Պ. Ասիլբեկյանը:

Արտահայտվողներն առաջարկեցին ֆակուլտետի ըստ մասնագիտությունների 2013–14 ուս. տարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքները համարել բավարար, իսկ կազմակերպական աշխատանքները համարել գերազանց:

Որոշեցին - Ֆակուլտետի ըստ մասնագիտությունների 2013–14 ուս. տարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքները համարել բավարար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ն. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ